

**ՔԻՄԻԱԿԱՆ ՆՅՈՒԹԵՐ ԶԵՆՔՔԵՐՄԱՆ
ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N «ԷԱՃԱՊԶԲ-2018/15-1-ԵՊԲՀ»**

Ք. Երևան

«___» _____ 2018թ.

«Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» Հիմնադրամ-ը ի դեմս Արմեն Աբգարի Մուրադյանի, որը գործում է «Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» Հիմնադրամի կանոնադրության հիման վրա, այսուհետ «Գնորդ», մի կողմից, և «Կոնցեռն-Էներգոմաշ» ՓԲ ընկերությունը, ի դեմս տնօրեն Բաբկեն Թադևոսյանի, որը գործում է «Կոնցեռն-Էներգոմաշ» ՓԲ ընկերության կանոնադրության հիման վրա, այսուհետ «Վաճառող» մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով (այսուհետ՝ պայմանագիր) սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման-ժամանակացուցով նախատեսված ապրանքը (այսուհետ՝ ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Գնորդն իրավունք ունի՝

2.1.1 Ապրանքը պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել ապրանքից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են 10 օրից ավելի:

2.1.2 Եթե հանձնվել է անպատշաճ որակի՝ պայմանագրով նախատեսված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք՝

ա) պահանջել հատուցելու ապրանքի անպատշաճ որակի լինելու պատճառով իր կատարած ծախսերը.

բ) չընդունել ապրանքն՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ապրանքը պայմանագրին համապատասխանող որակի ապրանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.3 կետով նախատեսված տուգանքը.

գ) հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ապրանքի համար վճարված գումարը:

2.1.3 Եթե հանձնվել է պայմանագրով որոշվածից պակաս քանակի ապրանք, ապա՝

ա) պահանջել լրացնելու ապրանքի պակաս հանձնված քանակը,

բ) հրաժարվել հանձնված ապրանքից և դրա համար վճարելուց, իսկ եթե ապրանքի համար վճարվել է, ապա պահանջել վերադարձնելու վճարված գումարը և վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.4 Եթե հանձնվել է տեսակի պայմանի խախտմամբ ապրանք, իր ընտրությամբ՝

ա) ընդունել տեսակի վերաբերյալ պայմանին համապատասխանող ապրանքը և հրաժարվել մնացած ապրանքներից.

բ) հրաժարվել հանձնված բոլոր ապրանքներից և պահանջել վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը.

գ) պահանջել տեսակի վերաբերյալ պայմանին չհամապատասխանող ապրանքի անհատույց փոխարինում պայմանագրով նախատեսված տեսակին համապատասխան ապրանքով:

2.1.5 Վաճառողի կողմից մատակարարման ժամկետների խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել ապրանքի մատակարարման նոր ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.6 Վաճառողից պահանջել հատուցելու վնասները, եթե Գնորդը Վաճառողի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով պայմանագրի լուծումից հետո ողջամիտ ժամկետում այլ անձից ավելի բարձր, սակայն ողջամիտ գնով գնել է ապրանք՝ պայմանագրով նախատեսվածի փոխարեն՝ պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով, ինչպես նաև ապրանքն այլ անձից ձեռք բերելու համար իր կատարած բոլոր անհրաժեշտ և ողջամիտ ծախսերը:

2.1.7 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը.

2.1.7.1 Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում.

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 10 օրից ավելի,

2.1.8 Ձննել ապրանքը և հայտնաբերված թերությունների մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2 Գնորդը պարտավոր է՝

2.2.1 Կատարել պայմանագրին համապատասխան մատակարարված ապրանքի ընդունումն ապահովող բոլոր անհրաժեշտ գործողությունները:

2.2.2 Վաճառողի հանձնած ապրանքից պայմանագրին համապատասխան հրաժարվելու դեպքում, ապահովել այդ ապրանքի պատասխանատու պահպանությունը և դրա մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2.3 Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված ապրանքն ընդունելու դեպքում Վաճառողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

2.2.4 Ապրանքի քանակի, տեսականու, որակի մասին պայմանագրի պայմանները խախտելու մասին Վաճառողին ծանուցել թերությունը հայտնաբերելուց հետո անմիջապես կամ այն բանից հետո՝ ողջամիտ ժամկետում, երբ պայմանագրի համապատասխան պայմանի խախտումը պետք է հայտնաբերված լիներ՝ ելնելով ապրանքի բնույթից և նշանակությունից:

2.2.5 Պայմանագրի 2.3.4 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Վաճառողին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.3 Վաճառողն իրավունք ունի՝

2.3.1 Գնորդից պահանջել ընդունելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված ապրանքը:

2.3.2 Գնորդից պահանջել վճարելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված և Գնորդի կողմից ընդունված ապրանքի համար իրեն վճարման ենթակա գումարները:

2.3.4 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Գնորդն էականորեն խախտել է պայմանագիրը:

2.3.4.1 Գնորդի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե բազմիցս խախտվել են ապրանքի համար վճարելու ժամկետները:

2.3.5 Գնորդի համաձայնությամբ վաղաժամկետ մատակարարել ապրանքը:

2.4 Վաճառողը պարտավոր է՝

2.4.1 Գնորդին հանձնել ապրանքը՝ պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով:

2.4.2 Ապահովել ապրանքի մատակարարումը պայմանագրի 2.1.2 կետի բ) ենթակետին և (կամ) 2.1.5 կետին համապատասխան՝ Գնորդի կողմից սահմանված ժամկետներում:

2.4.3 Գնորդին հանձնել երրորդ անձանց իրավունքներից ազատ ապրանք:

2.4.5 Գնորդին հանձնել պայմանագրով նախատեսված որակի և քանակի ապրանք՝ պայմանագրով նախատեսված ժամկետներում և հասցեով, իսկ Գնորդի պահանջով տրամադրել ապրանքի որակը հավաստող՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթեր:

2.4.6 Թերի մատակարարում թույլ տալու դեպքում, պայմանագրով նախատեսված կարգով, լրացնել թերի մատակարարվածը:

2.4.7 Հետ տանել Գնորդի կողմից պայմանագրի 2.2.2 կետին համապատասխան՝ պատասխանատու պահպանության ընդունված ապրանքը կամ ողջամիտ ժամկետում տնօրինել այն, ինչպես նաև հատուցել ապրանքը պատասխանատու պահպանության ընդունելու, այն իրացնելու կամ Վաճառողին վերադարձնելու հետ կապված անհրաժեշտ ծախսերը:

2.4.8 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.9 Գնորդին հանձնել ապրանքի պատկանելիքները և համապատասխան փաստաթղթերը:

2.4.10 Պայմանագրի 2.1.7 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Գնորդին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.4.11 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Գնորդին:

3. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Պայմանագրի գինը կազմում է 28 942 755(քսան ութ միլիոն ինը հարյուր քառասուն երկու հազար յոթ հարյուր հիսուն հինգ)ՀՀ դրամ ներառյալ ԱԱՀ-ն¹: Պայմանագրի գինը ներառում է պայմանագրի կատարումն

¹ Եթե Կատարողի կողմից գնային առաջարկը ներկայացվել է առանց ԱԱՀ-ի, ապա պայմանագիրը կնքելիս «ներառյալ ԱԱՀ-ն» բառերը հանվում են:

ապահովելու նպատակով Վաճառողի կողմից կատարվելիք բոլոր վճարները (ծախսերը), այդ թվում՝ հարկերը, տուրքերը, փոխադրման, ապահովագրման ծախսերը, պարգևավճարները և ակնկալվող շահույթը:

Ապրանքի մատակարարման գինը կայուն է և Վաճառողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Գնորդը նվազեցնելու այդ գինը:

3.2 Սույն պայմանագրի մասով Վաճառողը Ապրանքի մատակարարումը իրականացնում է միանվագ կամ փուլային ըստ Գնորդի ներկայացված պահանջի:

3.3 Գնորդն իրեն մատակարարված ապրանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Վաճառողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 20-ը:

4. ԱՊՐԱՆՔԻ ՈՐԱԿԸ ԵՎ ԵՐԱՇԽԻՔԸ

4.1 Վաճառողը երաշխավորում է մատակարարված ապրանքի որակի համապատասխանությունը պետական ստանդարտի պահանջներին:

5. ԱՊՐԱՆՔԻ ՀԱՆՁՆՈՒՄԸ ԵՎ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ

5.1 Մատակարարված ապրանքն ընդունվում է Գնորդի և Վաճառողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսվում է Գնորդի և Վաճառողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ապրանքի մատակարարման համար նախատեսված օրը ներառյալ Վաճառողը Գնորդին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների ARMEPS համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ուղեցույցներ, ձեռնարկներ» ենթաբաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Վաճառողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

5.2 Եթե մատակարարված ապրանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Գնորդը պայմանագրի 5.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 10 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների ARMEPS համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

5.3 Եթե մատակարարված ապրանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Գնորդը չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 5.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների ARMEPS համակարգի միջոցով Վաճառողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Գնորդը ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Վաճառողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

5.4 Եթե պայմանագրի 5.2 կետով սահմանված ժամկետում Գնորդը չի ընդունում մատակարարված ապրանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատակարարված ապրանքը համարվում է ընդունված և պայմանագրի 5.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Գնորդը էլեկտրոնային գնումների ARMEPS համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՄԻԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Վաճառողը պատասխանատվություն է կրում հանձնած ապրանքի որակի և պայմանագրով նախատեսված մատակարարման ժամկետների պահպանման համար:

6.2 Վաճառողի կողմից պայմանագրով նախատեսված ապրանքի մատակարարման ժամկետների խախտման դեպքում Վաճառողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ մատակարարման ենթակա, սակայն չհատակարարված ապրանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 1.1 կետում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք մատակարարելու յուրաքանչյուր դեպքում Վաճառողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի գնի 0,5 (զրո ամբողջ հինգ տասներորդական) տոկոսի չափով:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Վաճառողին վճարման ենթակա գումարների հետ:

6.5 Գնորդի կողմից պայմանագրի 3.3 կետով նախատեսված ժամկետի խախտման համար Գնորդի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՄ-ՄԱԺՈՐ)

Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Գնորդի կողմից այն ստորագրելու պահից և գործում է մինչև կողմերի՝ պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ պայմանագիրը կնքելու նատակով կազմակերպված գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Վաճառողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Գնորդը իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Գնորդը չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Վաճառողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Գնորդի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Եթե պայմանագրի գործողության ընթացքում Գնորդի կողմից գնման առարկայի պահանջը ներկայացվել է ոչ ամբողջ խմբաքանակի համար, ապա գնման առարկայի չմատակարարված, մնացորդային խմբաքանակի մասով պայմանագիրը լուծվում է:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ապրանքի ծավալների կամ ձևերի փոփոխության, որոնք կհանդիսանան պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.6 Ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Վաճառողի առաջարկության առկայության դեպքում, պայմանով, որ Գնորդի մոտ չի վերացել

ապրանքի օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Վաճառող կամ Գնորդ) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Վաճառողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Վաճառողը:

8.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.9 Վաճառողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Գնորդը հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Վաճառողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

8.10 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.11 Պայմանագիրը կազմված է 43 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.12 Պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

9. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ԳՆՈՐԴ

Երևանի Մխիթար Հերացու անվան պետական
բժշկական համալսարան Հիմնադրամ
ք. Երևան, Կորյունի 2
060 621 000
Հայբիզնեսբանկ ՓԲԸ
11500166513800
01503448
Արմեն Աբգարի Մուրադյան

ՎԱՃԱՌՈՂ

«Կոնցեռն-Էներգումաշ»ՓԲԸ
Հասցե՝ Բ.Երևան, Արզումանյան 32-10
Բանկ՝ «Էյչ Էս Բի ՄԻ Բանկ Հայաստան»ՓԲԸ
Հ/Հ 217002182558001
ՀՎՀՀ 01210095
Տնօրեն՝ Բ. Թադևոսյան

/ստորագրություն/
Կ.Տ

/ստորագրություն/
Կ.Տ

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

Ապրանքի												
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ դասակարգման (CPV)	անվանումը եւ ապրանքային նշանը	արտադրողի անվանումը եւ ծագման երկիրը	տեխնիկական բնութագիրը	չափման միավորը	միավոր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր քանակը	Մատակարարման			
									հասցեն	Ենթակաքանակը	Ժամկետը	
1	33691162 /225	Ռեֆլոտրոն գլյուկոզա Reflotron -Glucose 30str.	Roche Diagnostics Գերմանիա	Ռեֆլոտրոն Պլյուս բիոքիմիական անալիզատորի համար նախատեսված գլյուկոզա որոշման քանակական թեստ (Reflotron Glucose): Մեթոդ՝ ռեֆլակտոմետրիա: Ֆորմատ՝ 30 ստրիպ հերմետիկ փակ տուփում/հաստ: Ստուգող նմուշ՝ արյան շիճուկ/պլազմա/մազանոթային արյուն: Պահպանման պայմանները՝ սենյակային ջերմաստիճանում: Հանձնելու պահին պիտանիության ժամկետի 1/2 առկայություն, For In Vitro Diagnostic: Չօգտագործված:	հատ	22330	223300	10	Հերացի 58 և/կամ Մուրացան 114 հասցեներով	10	2018 թվականին՝ միանվագ կամ փուլային ըստ Պատվիրատուի ներկայացված պահանջի՝ 20 օրացույցային օրվա ընթացքում,	
2	33691162 /227	Ռեֆլոտրոն կրեատինին Reflotron - Creatinin 30str.	Roche Diagnostics Գերմանիա	Ռեֆլոտրոն Պլյուս բիոքիմիական անալիզատորի համար: Ռեֆլոտրոն Կրեատինին (Reflotron Creatinine) թեստ: Կրեատինինի	հատ	29700	297000	10	Հերացի 58 և/կամ Մուրացան 114 հասցեներով	10	2018 թվականին՝ միանվագ կամ փուլային ըստ Պատվիրատուի ներկայաց	

				<p>որոշման քանակական թեստ: Մեթոդ՝ ռեֆլակտրոմետրիա: Ֆորմատ՝ 30 ստրիպ հերմետիկ փակ տուփում/հատ: Մտուզող նմուշ՝ արյան շիճուկ /պլազմա/ մազանոթային արյուն:</p> <p>պիտանիության Պահպանման պայմանները՝ սենյակային ջերմաստիճանում: Հանձնելու պահին պիտանիության ժամկետի 1/2 առկայություն, For In Vitro Diagnostic Չօգտագործված:</p>							ված պահանջի՝ 20 օրացույց ային օրվա ընթացքում,
3	33141211 /410	Ուրիսիսի 1100 տպիչի թուղթ Termal Paper 50mm diameter	Roche Diagnostics Գերմանիա	<p>Ուրիսիսի 1100 անալիզատորի համար նախատեսված տպիչի թուղթ /Termal printer paper 50mm/: Ֆորմատ՝ հատ: Պահպանման պայմանները՝ սենյակային ջերմաստիճանում: Հանձնելու պահին պիտանիության ժամկետի 1/2 առկայություն: Չօգտագործված:</p>	հատ	760	11400	15	Հերացի 58 ն/կամ Մուրացան 114 հասցեներով	15	2018 թվականին միանվագ կամ փուլային ըստ Պատվիրատուի ներկայացված պահանջի՝ 20 օրացույց ային օրվա ընթացքում,
4	33691162 /228	Կոմբուր UX, 10 թեստ Combur-10-UX 100 Str.	Roche Diagnostics Գերմանիա	<p>Ուրիսիսի 1100 անալիզատորի համար նախատեսված Կոմբուր UX, 10 թեստ (Combur UX 10 tests): Մեզի մեջ ուրոբիլինոգենի, գլյուկոզի, բիլիռուբինի, կետոնների, տեսակարար կշռի, արյան, pH, սպիտակուցի, նիտրիտների, լեյկոցիտների որոշման թեստ-ստրիպ: Մեթոդ՝ ինդիկատորի գունավորում: Ֆորմատ՝ 100 ստրիպ սրվակում/հատ:</p>	հատ	22000	1606000	73	Հերացի 58 ն/կամ Մուրացան 114 հասցեներով	73	2018 թվականին միանվագ կամ փուլային ըստ Պատվիրատուի ներկայացված պահանջի՝ 20 օրացույց ային օրվա ընթացքում,

				Պահպանման պայմանները՝ սենյակային ջերմաստիճանում: Հանձնելու պահին պիտանիության ժամկետի 1/2 առկայություն, For In Vitro Diagnostic: Չօգտագործված:							
5	33691162 /229	Ստրոմատոլայգեր FB STROMATOLYSE R-FB 5L	Sysmex Գերմանիա	XT 4000i հեմատոլոգիական անալիզատորի համար Ստրոմատոլայգեր-FB (STROMATOLYSE R-FB), լուծիչ: Ֆորմատ՝ 5լ լուծիչ/հատ: Ստուգող նմուշ՝ երակային և մազանոթային արյուն: Պահպանման պայմանները՝ սենյակային ջերմաստիճանում: Հանձնելու պահին պիտանիության ժամկետի 1/2 առկայություն, For In Vitro Diagnostic: Չօգտագործված:	հատ	66000	132000	2	Հերացի 58 և/կամ Մուրացան 114 հասցեներով	2	2018 թվականին միանվագ կամ փուլային ըստ Պատվիրատուի ներկայացված պահանջի՝ 20 օրացույցային օրվա ընթացքում,
6	33691162 /230	Ստրոմատոլայգեր 4DL STROMATOLYSE R 4DL 1X2L	Sysmex Գերմանիա	XS 1000i և XT 4000i հեմատոլոգիական անալիզատորների համար նախատեսված ստրոմատոլայգեր-4DL (STROMATOLYSE R-4DL), քայքայող նյութ: Մեթոդ՝ Ֆլորոցենտոցիտ մետրիային անալիզ: Ֆորմատ՝ 2 լիտր քայքայող նյութ/հատ: Ստուգող նմուշ՝ երակային և մազանոթային արյուն: Պահպանման պայմանները՝ սենյակային ջերմաստիճանում: Հանձնելու պահին պիտանիության ժամկետի 1/2 առկայություն,	հատ	42000	252000	6	Հերացի 58 և/կամ Մուրացան 114 հասցեներով	6	2018 թվականին միանվագ կամ փուլային ըստ Պատվիրատուի ներկայացված պահանջի՝ 20 օրացույցային օրվա ընթացքում,

				For In Vitro Diagnostic: Չօգտագործված:							
7	33691162 /231	Ստրոմատոլայգեր 4DS STROMA TOLYSE R 4DS 3X42ML	Sysmex Գերմանիա	XS 1000i և XT 4000i հեմատոլոգիական անալիզատորի համար նախատեսված ներկող նյութ ստրոմատոլայգեր 4DS (STROMATOLYSER 4DS): Ֆորմատ՝ 3x42մլ ներկող նյութ տուփում/հատ: Ստուգվող նմուշ՝ երակային և մազանոթային արյուն: Պահպանման պայմանները՝ սենյակային ջերմաստիճանում: Հանձնելու պահին պիտանիության ժամկետի 1/2 առկայություն, For In Vitro Diagnostic: Չօգտագործված:	հատ	198000	198000	1	Հերացի 58 ն/կամ Մուրացան 114 հասցեներքով	1	2018 թվականին միանվագ կամ փուլային ըստ Պատվիրատուի ներկայացված պահանջի՝ 20 օրացույցային օրվա ընթացքում,
8	33691162 /232	Սուլֆոլայգեր SULFOLYSER 3X500ML	Sysmex Գերմանիա	XS 1000i և XT 4000i հեմատոլոգիական անալիզատորի համար նախատեսված ռեակցիոն ազդանյութ հեմոգլոբինը որոշելու համար (SULFOLYSER): Ֆորմատ՝ 3x500մլ տուփում/հատ: Ստուգվող նմուշ՝ երակային և մազանոթային արյուն: Պահպանման պայմանները՝ սենյակային ջերմաստիճանում: Հանձնելու պահին պիտանիության ժամկետի 1/2 առկայություն, For In Vitro Diagnostic: Չօգտագործված:	հատ	72000	576000	8	Հերացի 58 ն/կամ Մուրացան 114 հասցեներքով	8	2018 թվականին միանվագ կամ փուլային ըստ Պատվիրատուի ներկայացված պահանջի՝ 20 օրացույցային օրվա ընթացքում,
9	33691162 /233	Սելպակ CELPACK 10L	Sysmex Գերմանիա	XS 1000i և XT 4000i հեմատոլոգիական անալիզատորների համար նախատեսված	հատ	19800	594000	30	Հերացի 58 ն/կամ Մուրացան 114	30	2018 թվականին միանվագ կամ

				սելպակ (Cell pack), լուծիչ: Ֆորմատ՝ 10 լիտր լուծիչ/հատ: Ստուգող նմուշ՝ երակային և մազանոթային արյուն: Պահպանման պայմանները՝ սենյակային ջերմաստիճանում: Հանձնելու պահին պիտանիության ժամկետի 1/2 առկայություն, For In Vitro Diagnostic: Չօգտագործված:					հասցեներքով		փուլային ըստ Պատվիրատուի ներկայացված պահանջի՝ 20 օրացույցային օրվա ընթացքում,
10	33691162 /234	Ռետ-սետչII+ ներկ RETSEA RCH(II) 1L+12ML	Sysmex Գերմանիա	XT 4000i հեմատոլոգիական անալիզատորի համար նախատեսված ռետիկուլոցիտները ներկելու համար ռետ-սետչ II + ներկ (Retsearch II, diluents dye): Ֆորմատ՝ 1լ լուծիչ + 12մլ ներկ/հատ: Ստուգվող նմուշ՝ երակային և մազանոթային արյուն: Պահպանման պայմանները՝ սենյակային ջերմաստիճանում: Հանձնելու պահին պիտանիության ժամկետի 1/2 առկայություն, For In Vitro Diagnostic: Չօգտագործված:	հատ	180000	180000	1	Հերացի 58 ն/կամ Մուրացան 114 հասցեներքով	1	2018 թվականին միանվագ կամ փուլային ըստ Պատվիրատուի ներկայացված պահանջի՝ 20 օրացույցային օրվա ընթացքում,
11	33691162 /235	Մեկլին Cellclean 50ML	Sysmex Գերմանիա	XS 1000i և XT 4000i հեմատոլոգիական անալիզատորների համար Մեկլին (Cellclean) մաքրող նյութ: Մեթոդ՝ Ֆլորոցենտոցիտոմետրիային անալիզ PocH 100i, KX-21 N: Ֆորմատ՝ 50 մլ/հատ: Պահպանման պայմանները՝ սենյակային ջերմաստիճանում: Հանձնելու	հատ	40080	120240	3	Հերացի 58 ն/կամ Մուրացան 114 հասցեներքով	3	2018 թվականին միանվագ կամ փուլային ըստ Պատվիրատուի ներկայացված պահանջի՝ 20 օրացույցային օրվա ընթացքում,

				<p>պահին պիտանիության ժամկետի 1/2 առկայություն, For In Vitro Diagnostic: Չօգտագործված:</p>							
12	33691159 /91	Բիլիռուբին ուղղակի որոշման թեստ հավաքածու BIL-D Gen.2,350 Test cobas c, integra	Roche Diagnostics Գերմանիա	<p>Կոբաս Ինտեգրա և Կոբաս U311 անալիզատորների համար նախատեսված բիլիռուբին ուղղակի (Bilirubin direct, cobas Integra, cobas c): Ֆորմատ՝ 350 թեստ տուփում/հատ: Ստուգվող նմուշ՝ արյան շիճուկ: Պահպանման պայմանները՝ 2-8°C</p> <p>ջերմաստիճանում: Հանձնելու պահին պիտանիության ժամկետի 1/2 առկայություն, For In Vitro Diagnostic only: Չօգտագործված:</p>	հատ	13590	203850	15	Հերացի 58 և/կամ Մուրացան 114 հասցեներով	15	2018 թվականին միանվագ կամ փուլային ըստ Պատվիրատուի ներկայացված պահանջի՝ 20 օրացույցային օրվա ընթացքում,
13	33691159 /92	Խոլեսթերինի որոշման թեստ հավաքածու CHOL Hico Gen.2,400 Tests, cobas c, Integra	Roche Diagnostics Գերմանիա	<p>Կոբաս Ինտեգրա և Կոբաս U311 անալիզատորների համար նախատեսված խոլեստերինի որոշման թեստ հավաքածու (Cholesterol, cobas Integra, cobas c): Ֆորմատ՝ 400 թեստ տուփում/հատ: Ստուգվող նմուշ՝ արյան շիճուկ: Պահպանման պայմանները՝ 2-8°C</p> <p>ջերմաստիճանում: Հանձնելու պահին պիտանիության ժամկետի 1/2 առկայություն, For In Vitro Diagnostic only: Չօգտագործված:</p>	հատ	19630	157040	8	Հերացի 58 և/կամ Մուրացան 114 հասցեներով	8	2018 թվականին միանվագ կամ փուլային ըստ Պատվիրատուի ներկայացված պահանջի՝ 20 օրացույցային օրվա ընթացքում,
14	33691159 /93	Կրեատինինի որոշման թեստ հավաքածու	Roche Diagnostics Գերմանիա	<p>Կոբաս Ինտեգրա և Կոբաս U311 անալիզատորների համար նախատեսված կրեատինին</p>	հատ	14240	242080	17	Հերացի 58 և/կամ Մուրացան 114	17	2018 թվականին միանվագ կամ

		CREAJ Gen.2,700 Test,cobas c,Integra		<p>որոշման թեստ հավաքածու (creatinin jaffe, cobas integra, cobas c):</p> <p>Ֆորմատ՝ 700 թեստ տուփում/հատ: Ստուգող նմուշ՝ արյան շիճուկ:</p> <p>Պահպանման պայմանները՝ 2-8°C</p> <p>ջերմաստիճանում: Հանձնելու պահին պիտանիության ժամկետի 1/2 առկայություն, For In Vitro Diagnostic only: Չօգտագործված:</p>					հասցեներքով		փուլային ըստ Պատվիրատուի ներկայացված պահանջի՝ 20 օրացույցային օրվա ընթացքում,
15	33691159 /94	Գլյուկոզայի որոշման թեստ հավաքածու GLUC HK Gen.3,800 test, cobas c, Integra	Roche Diagnostics Գերմանիա	<p>Կոբաս Ինտեգրա և Կոբաս U311 անալիզատորների համար նախատեսված գլյուկոզա որոշման թեստ հավաքածու (Glucose HK large,cobas Integra, cobas c):</p> <p>Ֆորմատ՝ 800 թեստ տուփում/հատ: Ստուգվող նմուշ՝ արյան շիճուկ:</p> <p>Պահպանման պայմանները՝ 2-8°C</p> <p>ջերմաստիճանում: Հանձնելու պահին պիտանիության ժամկետի 1/2 առկայություն, For In Vitro Diagnostic only: Չօգտագործված:</p>	հատ	20280	304200	15	Հերացի 58 և/կամ Մուրացան 114 հասցեներքով	15	2018 թվականին միանվագ կամ փուլային ըստ Պատվիրատուի ներկայացված պահանջի՝ 20 օրացույցային օրվա ընթացքում,
16	33691159 /95	ՑխԼ-խոլեսթերոլ որոշման թեստ հավաքածու LDL-C Gen.3, 200 tests, cobas c, Int	Roche Diagnostics Գերմանիա	<p>Կոբաս Ինտեգրա և Կոբաս U311 անալիզատորների համար նախատեսված ՑխԼ խոլեստրինի որոշման թեստ հավաքածու (LDL Cholesterol, cobas Integra, cobas c):</p> <p>Ֆորմատ՝ 200 թեստ տուփում/հատ: Ստուգվող նմուշ՝ արյան շիճուկ:</p> <p>Պահպանման</p>	հատ	89910	989010	11	Հերացի 58 և/կամ Մուրացան 114 հասցեներքով	11	2018 թվականին միանվագ կամ փուլային ըստ Պատվիրատուի ներկայացված պահանջի՝ 20 օրացույցային օրվա ընթացքում,

				<p>պայմանները՝ 2-8°C ջերմաստիճանում: Հանձնելու պահին պիտանիության ժամկետի 1/2 առկայություն, For In Vitro Diagnostic only: Չօգտագործված:</p>							
17	33691159 /96	<p>ԲԽԼ- խոլեստերոլ որոշման թեստ հավաքածու HDL-C Gen.3, 200 tests, cobas c, Integra</p>	<p>Roche Diagnostics Գերմանիա</p>	<p>Կոբաս Ինտեգրա և Կոբաս U311 անալիզատորների համար նախատեսված ԲԽԼ խոլեստերինի որոշման թեստ հավաքածու (HDL Cholesterol, cobas Integra, cobas c): Ֆորմատ՝ 200 թեստ տուփում/հատ: Ստուգվող նմուշ՝ արյան շիճուկ: Պահպանման պայմանները՝ 2-8°C ջերմաստիճանում: Հանձնելու պահին պիտանիության ժամկետի 1/2 առկայություն, For In Vitro Diagnostic only: Չօգտագործված:</p>	հատ	33850	372350	11	<p>Հերացի 58 և/կամ Մուրացան 114 հասցեներով</p>	11	<p>2018 թվականին միանվագ կամ փուլային ըստ Պատվիրատուի ներկայացված պահանջի՝ 20 օրացույցային օրվա ընթացքում,</p>
18	33691159 /97	<p>Ընդհանուր սպիտակուցի որոշման թեստ հավաքածու Gen.2, 300Tests, cobas c, Integra</p>	<p>Roche Diagnostics Գերմանիա</p>	<p>Կոբաս Ինտեգրա և Կոբաս U311 անալիզատորների համար նախատեսված ընդհանուր սպիտակուց որոշման թեստ հավաքածու (Total Protein Gen.2, cobas Integra, cobas c): Ֆորմատ՝ 300 թեստ տուփում/հատ: Ստուգվող նմուշ՝ արյան շիճուկ: Պահպանման պայմանները՝ 2-8°C ջերմաստիճանում: Հանձնելու պահին պիտանիության ժամկետի 1/2 առկայություն, For In Vitro Diagnostic only: Չօգտագործված:</p>	հատ	8010	144180	18	<p>Հերացի 58 և/կամ Մուրացան 114 հասցեներով</p>	18	<p>2018 թվականին միանվագ կամ փուլային ըստ Պատվիրատուի ներկայացված պահանջի՝ 20 օրացույցային օրվա ընթացքում,</p>

19	33691159 /98	Եռզլիցերիդների որոշման թեստ հավաքածու TRIGL,250 Tests, cobas c, Integra	Roche Diagnostics Գերմանիա	Կոբաս ինտեգրա և Կոբաս U311 անալիզատորների համար նախատեսված եռզլիցերիդների որոշման թեստ հավաքածու (Triglycerides, cobas Integra, cobas c): Ֆորմատ՝ 250 թեստ տուփում/հատ: Ստուգվող նմուշ՝ արյան շիճուկ: Պահպանման պայմանները՝ 2-8°C ջերմաստիճանում: Հանձնելու պահին պիտանիության ժամկետի 1/2 անկայություն, For In Vitro Diagnostic only: Զօգտագործված:	հատ	16170	80850	5	Հերացի 58 և/կամ Մուրացան 114 հասցեներով	5	2018 թվականին միանվագ կամ փուլային ըստ Պատվիրատուի ներկայացված պահանջի՝ 20 օրացույցային օրվա ընթացքում,
20	33691162 /236	Միզանյութի որոշման թեստ հավաքածու UREAL,500Tests,cobas c, Integra	Roche Diagnostics Գերմանիա	Կոբաս Ինտեգրա և Կոբաս U311 անալիզատորների համար նախատեսված միզանյութի որոշման թեստ հավաքածու (Urea, cobas Integra, cobas c): Ֆորմատ՝ 500 թեստ տուփում/հատ: Ստուգվող նմուշ՝ արյան շիճուկ: Պահպանման պայմանները՝ 2-8°C ջերմաստիճանում: Հանձնելու պահին պիտանիության ժամկետի 1/2 անկայություն, For In Vitro Diagnostic only:	հատ	16010	176110	11	Հերացի 58 և/կամ Մուրացան 114 հասցեներով	11	2018 թվականին միանվագ կամ փուլային ըստ Պատվիրատուի ներկայացված պահանջի՝ 20 օրացույցային օրվա ընթացքում,
21	33691159 /99	Գլիկոլիզացված հեմոգլոբինի A1c քանակական որոշման թեստ հավաքածու HbA1c TQ Gen.3,150 Tests,	Roche Diagnostics Գերմանիա	Գլիկոլիզացված հեմոգլոբինի որոշման թեստ հավաքածու (HbA1C): Ֆորմատ՝ 150 թեստ տուփում/հատ: Ստուգվող նմուշ՝ արյուն: Հանձնելու պահին պիտանիության ժամկետի 1/2 անկայություն:	հատ	91950	91950	1	Հերացի 58 և/կամ Մուրացան 114 հասցեներով	1	2018 թվականին միանվագ կամ փուլային ըստ Պատվիրատուի ներկայացված պահանջի՝ 20

		cobas c 501		Պահպանման պայմանները սենյակային: For In Vitro Diagnostic only Չօգտագործված:							օրացույց ային օրվա ընթացքում,
22	33691159 /100	Հեմոլիզացնող ռեագենտ (ամբողջական արյուն) HbA1c TQ haemolyzing rgt, cobas c	Roche Diagnostics Գերմանիա	Կոբաս Ինտեգրա և Կոբաս U311 անալիզատորների համար նախատեսված հեմոլիզացնող ռեագենտ /ամբողջական արյուն/ (Hemolyzing Reagent Gen.2, cobas c /Whole blood/): Ֆորմատ՝ 51մլ/հատ: Պահպանման պայմանները՝ 2-8°C ջերմաստիճանում: Հանձնելու պահին պիտանիության ժամկետի 1/2 առկայություն, For In Vitro Diagnostic only Չօգտագործված:	հատ	33850	33850	1	Հերացի 58 և/կամ Մուրացան 114 հասցեներով	1	2018 թվականին միանվագ կամ փուլային ըստ Պատվիրատուի ներկայացված պահանջի՝ 20 օրացույց ային օրվա ընթացքում,
23	33691159 /101	Գամմա-գլյուտամիլ տարանսպեպտիդազայի որոշման թեստ հավաքածու GGT Gen.2,400 Tests,cobas c, Integra	Roche Diagnostics Գերմանիա	Կոբաս Ինտեգրա և Կոբաս U311 անալիզատորների համար նախատեսված գամմա-գլյուտամիլ տրանսֆերոազ (GGT, cobas Integra, cobas c): Ֆորմատ՝ 400 թեստ տուփում/հատ: Ստուգող նմուշ՝ արյան շիճուկ: Պահպանման պայմանները՝ 2-8°C ջերմաստիճանում: Հանձնելու պահին պիտանիության ժամկետի 1/2 առկայություն, For In Vitro Diagnostic only: Չօգտագործված:	հատ	19630	39260	2	Հերացի 58 և/կամ Մուրացան 114 հասցեներով	2	2018 թվականին միանվագ կամ փուլային ըստ Պատվիրատուի ներկայացված պահանջի՝ 20 օրացույց ային օրվա ընթացքում,
24	33691159 /102	Ասպարտամինոտրանսֆերազի որոշման թեստ հավաքածու	Roche Diagnostics Գերմանիա	Կոբաս Ինտեգրա և Կոբաս U311 անալիզատորների համար նախատեսված ԱՍՏ ասպարտամինոտրանսֆերազի որոշման	հատ	15100	256700	17	Հերացի 58 և/կամ Մուրացան 114 հասց	17	2018 թվականին միանվագ կամ փուլային ըստ Պատվիրատուի ներկայաց

		ASTL,500 Tests, cobas c, Integra		<p>թեստ հավաքածու (AST cobas Integra, cobas c): Ֆորմատ՝ 500</p> <p>թեստ տուփում/հատ: Ստուգվող նմուշ՝ արյան շիճուկ:</p> <p>Պահպանման պայմանները՝ 2-8°C</p> <p>ջերմաստիճանում: Հանձնելու պահին պիտանիության ժամկետի 1/2 առկայություն, For In Vitro Diagnostic only:</p> <p>Չօգտագործված:</p>					եներով		ված պահանջի՝ 20 օրացույց ային օրվա ընթացքում,
25	33691159 /103	Ալանին ամինոտրանսֆերազի որոշման թեստ հավաքածու ALTL,500 Tests, cobas c, Integra	Roche Diagnostics Գերմանիա	<p>Կոբաս Ինտեգրա և Կոբաս U311 անալիզատորների համար նախատեսված ալանին ամինոտրանսֆերազայի որոշման թեստ հավաքածու (ALT, cobas Integra, cobas c): Ֆորմատ՝ 500</p> <p>թեստ տուփում/հատ: Ստուգվող նմուշ՝ արյան շիճուկ:</p> <p>Պահպանման պայմանները 2-8°C</p> <p>ջերմաստիճանում: Հանձնելու պահին պիտանիության ժամկետի 1/2 առկայություն, For In Vitro Diagnostic only</p> <p>Չօգտագործված:</p>	հատ	15100	271800	18	Հերացի 58 և/կամ Մուրացան 114 հասց եներով	18	2018 թվականին միանվագ կամ փուլային ըստ Պատվիրատուի ներկայացված պահանջի՝ 20 օրացույց ային օրվա ընթացքում,
26	33691159 /104	C-նեակտիվ սպիտակուցի որոշման թեստ-կասետ CRP Gen.3, 250 Tests, cobas c	Roche Diagnostics Գերմանիա	<p>Կոբաս Ինտեգրա և Կոբաս U311 անալիզատորների համար նախատեսված C-նեակտիվ սպիտակուցի որոշման թեստ կասետ (CRP cobas c311): Ֆորմատ՝ 250</p> <p>թեստ տուփում/հատ: Ստուգվող նմուշ՝ արյան շիճուկ:</p> <p>Պահպանման պայմանները՝ 2-8°C</p>	հատ	153080	612320	4	Հերացի 58 և/կամ Մուրացան 114 հասց եներով	4	2018 թվականին միանվագ կամ փուլային ըստ Պատվիրատուի ներկայացված պահանջի՝ 20 օրացույց ային օրվա ընթացքում,

				<p>ջերմաստիճանում: Հանձնելու պահին պիտանիության ժամկետի 1/2 առկայություն, For In Vitro Diagnostic only: Չօգտագործված:</p>							
27	33691159 /105	Անտիստրեպտոկոկին-Օ որոշման թեստ-կասետ ASLO TQ 150Tests, cobas	Roche Diagnostics Գերմանիա	<p>Կորաս U311 անալիզատորի համար նախատեսված անտիստրեպտոկոկին-Օ որոշման թեստ կասետ (ASLO TQ, cobas c): Ֆորմատ՝ 150 թեստ տուփում/հատ: Ստուգվող նմուշ՝ արյան շիճուկ: Պահպանման պայմանները՝ 2-8°C</p> <p>ջերմաստիճանում: Հանձնելու պահին պիտանիության ժամկետի 1/2 առկայություն, For In Vitro Diagnostic only: Չօգտագործված:</p>	հատ	64020	64020	1	Հերացի 58 ն/կամ Մուրացան 114 հասցեներով	1	2018 թվականին միանվագ կամ փուլային ըստ Պատվիրատուի ներկայացված պահանջի՝ 20 օրացույցային օրվա ընթացքում,
28	33691159 /106	Բիլիռուբին Ընդհանուր որոշման թեստ հավաքածու BIL-T Gen.3, 250Tests, cobas c, Integra	Roche Diagnostics Գերմանիա	<p>Կորաս Ինտեգրա և Կորաս U311 անալիզատորների համար նախատեսված բիլիռուբին ընդհանուր որոշման թեստ հավաքածու (BIL-Total Gen.2, cobas Integra, cobas c): Ֆորմատ՝ 250 թեստ տուփում/հատ: Ստուգվող նմուշ՝ արյան շիճուկ: Պահպանման պայմանները՝ 2-8°C</p> <p>ջերմաստիճանում: Հանձնելու պահին պիտանիության ժամկետի 1/2 առկայություն, For In Vitro Diagnostic only: Չօգտագործված:</p>	հատ	17900	322200	18	Հերացի 58 ն/կամ Մուրացան 114 հասցեներով	18	2018 թվականին միանվագ կամ փուլային ըստ Պատվիրատուի ներկայացված պահանջի՝ 20 օրացույցային օրվա ընթացքում,
29	33691159 /107	Մագնեզիումի որոշման թեստ-հավաքածու/1	Roche Diagnostics Գերմանիա	<p>Կորաս Ինտեգրա և Կորաս U311 անալիզատորների համար նախատեսված</p>	հատ	28030	84090	3	Հերացի 58 ն/կամ Մուրացան	3	2018 թվականին միանվագ կամ փուլային

		MG Gen.2,250 Tests, cobas c		մագնեզիում որոշման թեստ հավաքածու (Magnesium, cobas Integra, cobas c): Ֆորմատ՝ 250 թեստ տուփում/հատ: Ստուգվող նմուշ՝ արյան շիճուկ: Պահպանման պայմանները՝ 15-25°C ջերմաստիճանում: Հանձնելու պահին պիտանիության ժամկետի 1/2 առկայություն, For In Vitro Diagnostic only: Չօգտագործված:					114 հասց եներով		ըստ Պատվիրատուի ներկայացված պահանջի՝ 20 օրացույցային օրվա ընթացքում,
30	33691159 /108	Կալցիումի որոշման թեստ հավաքածու CA,Gen.2 , 300Tests, cobas c, integra	Roche Diagnostics Գերմանիա	Կորաս ինտեգրա և ԿորասU311 անալիզատորների համար Կալցիում (CALCIUM, cobas Integra, cobas c): Ֆորմատ՝ 300 թեստ տուփում/հատ: Ստուգվող նմուշ՝ արյան շիճուկ: Պահպանման պայմանները՝ 15-25 ջերմաստիճան: Հանձնելու պահին պիտանիության ժամկետի 1/2, For In Vitro Diagnostic only: Չօգտագործված:	հատ	14240	42720	3	Հերացի 58 և/կամ Մուրացան 114 հասց եներով	3	2018 թվականին միանվագ կամ փուլային ըստ Պատվիրատուի ներկայացված պահանջի՝ 20 օրացույցային օրվա ընթացքում,
31	33691159 /109	Ալբումինի որոշման թեստ հավաքածու ALB BCG Gen.2, 300Tests, cobas c,Int.	Roche Diagnostics Գերմանիա	Կորաս Ինտեգրա և Կորաս U311 անալիզատորների համար նախատեսված ալբումինի որոշման թեստ հավաքածու (cobas Integra, cobas c): Ֆորմատ՝ 300 թեստ տուփում/հատ: Ստուգող նմուշ՝ արյան շիճուկ: Պահպանման պայմանները՝ 2-8°C ջերմաստիճանում: Հանձնելու պահին պիտանիության ժամկետի 1/2	հատ	14780	73900	5	Հերացի 58 և/կամ Մուրացան 114 հասց եներով	5	2018 թվականին միանվագ կամ փուլային ըստ Պատվիրատուի ներկայացված պահանջի՝ 20 օրացույցային օրվա ընթացքում,

				առկայություն, For In Vitro Diagnostic only: Չօգտագործված:							
32	33691159 /110	Ամիլազ պանկրե ատիկ որոշման թեստ հավաքա ծու AMY- P,200 TESTS,C OBAS C, Integra	Roche Diagnostics Գերմանիա	Կոբաս Ինտեգրա և Կոբաս U311 անալիզատորնե րի համար նախատեսված α-ամիլազի (պանկրեատիկ) որոշման թեստ հավաքածու (Alpha-amylase Pancreatic, cobas Intera, cobas c): Ֆորմատ՝ 200 թեստ տուփում/հատ: Ստուգվող նմուշ՝ արյան շիճուկ: Պահպանման պայմանները՝ 2-8°C ջերմաստիճանո ւմ: Հանձնելու պահին պիտանիության ժամկետի 1/2 առկայություն, For In Vitro Diagnostic only: Չօգտագործված:	հատ	38380	153520	4	Հերա ցի 58 ն/կա մ Մուր ացան 114 հասց եներո վ	4	2018 թվականի ն միանվագ կամ փուլային ըստ Պատվիր ատուի ներկայաց ված պահանջի 20 օրացույց ային օրվա ընթացքու մ,
